

Կ-621<sup>2</sup>-03.10.2014-ՏՀ-010/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «200 մլն դրամը գերազանցող» բառերը և մասը վերջին պարբերությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև ժամկետի լրանալու օրը:»,

2) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված հետաձգման ժամկետի լրանալը սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն առաջանում է) մաքսային մարմիններին ներկայացված՝ հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ՝ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, և հայտարարությունում նշված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե ժամկետի հետաձգումը դադարեցնելու օրվանից 10-օրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները կարող են մարվել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով օրենքի համաձայն հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին՝ վերադարձի գումարի վերաձևակերպման միջոցով:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը և այդ գումարների նկատմամբ հսկողությունն իրականացնում է մաքսային մարմինը: Մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:»:

**Հոդված 2.** Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) չորրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել,

2) հինգերորդ պարբերության առաջին նախադասությունից հանել «թղթային կամ» բառերը, իսկ երկրորդ նախադասությունում «էլեկտրոնային հարկային հաշիվը» բառերը փոխարինել «Հարկային հաշիվը» բառերով,

3) յոթերորդ պարբերությունից հանել վերջին նախադասությունը,

4) վերջին պարբերությունից հանել առաջին նախադասությունը:

**Հոդված 3.** Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20.** Հարկային հաշվում պարտադիր նշվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված տվյալները.

2) ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը՝ առանձին տողով.

3) հարկային հաշվի սերիան ու համարը.

4) ԱԱՀ վճարողի հաշվառման համարը.

5) ապրանքի մատակարարման կամ ծառայության մատուցման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքում հարկային հաշվում առանձնացվում է նաև ակցիզային հարկի գումարը:

Հարկային հաշիվները դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով:

Սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք՝

1) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմին են ներկայացնում տեղեկատվություն իրենց կողմից առանց ինտերնետային կապի դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ,

2) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվները:

Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում հարկային պարտավորություն կրելիս ավելացված արժեքի հարկ վճարող անձինք Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի անունից կարող են օրենքով սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ, որոնցում որպես ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար և հարկ վճարողի հաշվառման համար նշում են իրենց համապատասխան հաշվառման համարները: Նշված կարգով դուրս գրված հարկային հաշիվները համարվում են մատակարարի կողմից դուրս գրված:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է ԱԱՀ վճարողների հաշվառման, հարկային հաշիվների դուրսգրման և հարկային հաշվի սերիայի ու համարի գեներացման կարգերը:»:

**Հոդված 4.** Օրենքի 20.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20.1.** Սխալներով լրացված և դուրս գրված հարկային հաշիվները չեղյալ են ճանաչվում հարկային հաշիվ դուրս գրող անձի կողմից:

Ավելացված արժեքի հարկով հարկման նպատակով հարկային հաշիվների չեղյալ ճանաչման հետ կապված ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության և հարկի գումարի նվազեցումներ չեն կատարվում, եթե չի պահպանվել հարկային հաշիվների չեղյալ ճանաչման կարգը:

Գործարքը հարկային հաշվում նշված պայմաններով չկատարվելու, հարկային հաշվում նշված պայմանները օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոփոխվելու դեպքերում հարկային հաշիվ դուրս գրող և (կամ) ստացող անձը դուրս է գրում ճշգրտող հարկային հաշիվ:

Ճշգրտող հարկային հաշիվները դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարկային հաշիվների չեղյալ ճանաչման և ճշգրտող հարկային հաշիվների դուրս գրման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 5.** Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի`

1) երրորդ պարբերությունում «կատարվել է վճարումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի» բառերը,

2) երրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար սույն օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում, ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցել նաև առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու`

ա. 2015 թվականի հունվարի 1-ից` այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված` սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 100 միլիոն դրամը,

բ. 2016 թվականի հունվարի 1-ից` այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված` սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 500 միլիոն դրամը,

գ. 2017 թվականի հունվարի 1-ից` բոլոր ԱԱՀ վճարողները:

Մինչև սույն մասի չորրորդ պարբերությամբ սահմանված համապատասխան ժամկետները, ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու առումով ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների դիմաց վճարում կատարված լինելը համարվում է բավարար-

ված նաև այն դեպքում, երբ սույն հոդվածի համաձայն վճարումը կատարվել է այն ռեզիդենտ անձին, որին պահանջի իրավունքի գիջման (ներառյալ ֆակտորինգի) պայմանագրով փոխանցվել է ապրանքների մատակարարած կամ ծառայություններ մատուցած անձի պահանջի իրավունքը:»:

**Հոդված 6.** Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետում «որոնց մասով սույն օրենքի 20 հոդվածին համապատասխան տեղեկություններ չեն ներկայացվել» բառերը փոխարինել «որոնք մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել» բառերով:

**Հոդված 7.** Օրենքի 33-րդ հոդվածի երկրորդ պարբերությունից հանել «և (կամ) սույն օրենքի 20 հոդվածով սահմանված տեղեկությունների ճշգրտումներ (ճշգրտված տեղեկություններ)» և «և (կամ) տեղեկությունները» բառերը:

**Հոդված 8.** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 43-րդ հոդվածի վերջին պարբերությունը:

**Հոդված 9.** Օրենքի 43.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 43.1.** Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում (այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո դուրս գրված, սակայն այդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող) առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չեն և կարող են հաշվանցվել այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով (հաշվարկներով):»:

**Հոդված 10.** Օրենքի 43.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 43.2.** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի խախտմամբ հարկային հաշիվ (այդ թվում՝ ճշգրտող հարկային հաշիվ) դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ դուրս գրողը վճարում է տուգանք՝ հարկային հաշվի կամ ճշգրտող հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) կրկնակիի չափով, բայց ոչ պակաս 5 միլիոն դրամից:»:

**Հոդված 11.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված փոփոխությունները տարածվում են նաև մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ներմուծված ապրանքների վրա, որոնք

մինչև 2015 թվականի հունվարի 1-ը չեն օտարվել և օգտագործման իրավունքով չեն հանձնվել այլ անձանց:

Անձինք առանց ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների դիմաց վճարում կատարելու ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կարող են կատարել միայն սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ կետով սահմանված համապատասխան ժամկետներից հետո կատարվող ձեռքբերումների մասով, իսկ մինչև համապատասխան ժամկետները կատարված ձեռքբերումների մասով ԱԱՀ-ի գծով հաշվանցումները կատարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով:

Անձինք սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ կետով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող վերջին պարբերությամբ սահմանված կանոններով ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կարող են կատարել 2015 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող գործարքների մասով:

Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճշգրտող հարկային հաշիվների դուրս գրման կարգի ուժի մեջ մտնելը դուրս գրված հարկային հաշիվների անվավեր ճանաչման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգով:

Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններում կատարված գործարքների համար դուրս գրված թղթային հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

| h/h                                                                                                                                          | Առարկության, առաջարկության հեղինակը                                                                                                          | Առարկության, առաջարկության բովանդակությունը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | Կատարված փոփոխությունները                                                                                                                                                                                                                                            |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b> |                                                                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                                                                                      |
| 1.                                                                                                                                           | ՀՀ ԱԺ պատգամավորներ Սամվել Ֆարմանյան, Վարդան Այվազյան<br><br>Միքայել Մելքունյան, Նաիրա Զոհրաբյան<br><br>Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան | Առաջարկվում է՝<br>1) վճարված եկամտային հարկի հետ վերադարձման համակարգը տարածել նաև անհատական բնակարանային շինարարության շրջանակներում կառուցվող բնակարանների կամ անհատական բնակելի տների ձեռք բերման գործարքների վրա,<br><br>2) նախագծից հանել այն դրույթը, որի համաձայն, ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից ձեռքբերված բնակարանների մասով,<br><br>3) նախագծի 1-ին հոդվածի առաջին մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը հետ է վերադարձվում Հայաստանի Հանրապետության տարածքում բնակարանի ձեռքբերման նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանն ուղղված հիպոթեքային վարկի համար վճարվող տոկոսների չափով, բայց ոչ ավելի, քան`»: | Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնց համաձայն, վճարված եկամտային հարկի հետ վերադարձման համակարգը տարածվում է նաև անհատական բնակարանային շինարարության շրջանակներում կառուցվող անհատական բնակելի տների ձեռք բերման գործարքների վրա: |

|                                                                                                                                                                              |                                                          |                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 2.                                                                                                                                                                           | ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյան                         | Առաջարկվում է վճարված եկամտային հարկը հետ վերադարձնելու փոխարեն աղբյուրի մոտ համապատասխան գումարի չափով պակասեցնել բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարը:                                                                                                                 | Գտնում ենք, որ նախագծով ներկայացված մոտեցումն առավել արդյունավետ է, քանի որ՝<br>1) այն հնարավորություն կընձեռի համախմբել միաժամանակ մի քանի գործատուներից աշխատավարձ ստացող անձի կողմից վճարված եկամտային հարկի գումարները և այդ հանրագումարը չգերազանցող չափով վճարված եկամտային հարկի գումարը եռամսյակային պարբերականությամբ հետ վերադարձնել ֆիզիկական անձին,<br>2) նախագծով ներկայացված մոտեցումը վարչարարական առումով առավել պարզ է, քանի որ առաջարկվող տարբերակի պարագայում անհրաժեշտ կլինի վերահսկողություն իրականացնել տարբեր աղբյուրներից պարբերաբար ստացվող եկամուտներից կատարվող նվազեցումների նկատմամբ,<br>3) ներկայացված առաջարկությունը չի հիմնավորվում նաև միջազգային փորձի տեսանկյունից: |
| <b>«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br/>Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b> |                                                          |                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
| 3.                                                                                                                                                                           | ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան | Առաջարկվում է հստակեցնել նախագծի 5-րդ հոդվածի ա, բ և գ կետերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հղում է կատարվում նախագծի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերին, բայց նախագծի 6-րդ հոդվածում կետեր չկան:                                                                   | Նախագծում կատարված հղումները վերաբերում են մայր օրենքի տեքստին և ոչ թե նախագծի տեքստին:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| 4.                                                                                                                                                                           | ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյան                         | Առաջարկվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.2-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) կրկնակիի չափով, բայց ոչ պակաս 5 միլիոն դրամից, կիսով չափ կրճատել և սահմանել ոչ պակաս, քան 2.5 միլիոն դրամից: | «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.2-րդ հոդվածով նախատեսված տուգանքը նախատեսված է ոչ թե անգույնորեն, այլ դիտավորությամբ կատարվող գործողության համար, այն է՝ ՀՀ կառավարության սահմանված կարգի խախտմամբ կամ ապօրինի ձեռք բերված կամ պատճենահանված ձևերի լրացմամբ հարկային հաշվի դուրս գրում: Այս առումով, տուգանքի մեծությունը երկու անգամ նվազեցնելը նպատակահարմար չէ:                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| 5.                                                                                                                                                                           | ՀՀ կառավարություն                                        | Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 23-րդ հոդվածում լրացվող նոր                                                                                                                                                                                                  | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                          |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                          | պարբերություններից վերջինում «այն անձին» բառերը փոխարինել «այն ռեզիդենտ անձին» բառերով:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| <b>«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b>                                                                                                                                                                                                                      |                                                          |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| 6.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         | ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան | Առաջարկվում է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «Սահմանամերձ գյուղական համայնքներում» բառերը փոխարինել «Սահմանապահ և մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներ» բառերով:                                                                                                                                                                                                                                                                                                                                           | Կարծում ենք, որ նախագծով ներկայացված մոտեցումը առավել արդարացի է, քանի որ այն հնարավորություն է ընձեռում արտոնությունները կիրառել նաև ՀՀ կառավարության կողմից հաստատվող ցանկում ներառված այն սահմանամերձ գյուղական համայնքների մասով, որոնք ունեն 300-ից ավելի բնակիչներ:                                           |
| <b>«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b> |                                                          |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| 7.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         | ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան | Առաջարկվում է՝<br>1) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսը» բառերը փոխարինել «0.10 տոկոսով» բառերով,<br>2) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսը» բառերը փոխարինել «0.05 տոկոսով» բառերով,<br>3) «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսի չափով» բառերը փոխարինել «0.10 տոկոսի չափով» բառերով: | Նախագծերով ներկայացված՝ տույժի հաշվարկման նոր դրույքաչափը՝ օրական 0.15 տոկոս, ավելի հիմնավոր է, քանի որ այն հավասար է հարկերի վճարումն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքերում հաշվարկվող տույժի օրական չափին:                                                                                              |
| 8.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         | ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան  | Առաջարկվում է փաթեթից հանել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ այն գրեթե նույնությամբ կրկնում է 2013 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ներկայացված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն արդեն գտնվում է երկրորդ ընթերցման                                                                                                                                                        | Նախագծերի փաթեթով ներկայացված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, ի տարբերություն ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ներկայացված օրենսդրական նախագծի, տույժերի հաշվարկման անցումային հարաբերություններն ամբողջությամբ |

|  |                                                                                                                                                                            |          |                                                                                                                                                                                |
|--|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|  |                                                                                                                                                                            | փուլում: | կարգավորված են: Բացի այդ, նախագծով առաջարկվում է նվազեցնել նաև պաշտոնատար անձանց նկատմամբ տույժերի հաշվարկման դրույթաչափը ու սահմանափակել տույժերի հաշվարկման ժամանակահատվածը: |
|  | «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան: |          |                                                                                                                                                                                |